# Արձանագրություն N 3

«ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-15/1-17» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» փետրվարի 2017թ

ժամը՝ 16:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

նախագահ՝ **Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)**
Թագուհի Խաչատրյանը

անդամներ՝ **Գնման պատասխանատու/ Բացման Աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)**
Նելլի Շամյան
Նանա Վարդանովա

անդամներ՝ **Գնման պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)**
Շողիկ Աբելյան
Նատալյա Ղազանչյանը

քարտուղար՝ **Գնման պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)**
Սյունե Բաղալյանը

**1. «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-15/1-17» ծածկագրով մրցույթի մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը**

---

(Թ. Խաչատրյան)

1.1 «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-15/1-17» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2017 թվականի փետրվարի 09-ին, ժամը 11:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**2. Հայտեր ներկայացրած մասնակցի (մասնակիցների) անվանումները և հասցեները**

---

(Թ. Խաչատրյան)

| | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ | ք. Երևան, Պուշկինի 1 |
| 2. | «Ֆլեշ» ՍՊԸ | ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30 |
| 3. | «Մաքսիուր» ՍՊԸ | ք. Երևան, Արշակունյաց 9 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

---

(Թ. Խաչատրյան)

3.1 «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի, «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից «Բենզին Ռեգուլյար» չափաբաժնի մասով www.armeps.am կայքում Մասնագիտական փորձառության հայրարարության՝ Հավելված 3.2-ի փոխարեն կցվել է Տեխնիկական միջոցների մասին հայտարարությունը՝ Հավելված 3.3-ը: «Ֆլեշ» ՍՊԸ-ին www.armeps.am կայքի միջոցով 09.02.2017թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ տրվել է 1 աշխատանքային օր՝

անհամապատասխանությունը շտկելու համար, և «Ֆլեշ» ՍՊԸ-ն 09.02.2017թ.-ին ներկայացրել է պահանջվող տեղեկատվությունը, և վերջինիս հայտը հետագա գնահատման համար համարվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանություն վերաբերյալ տեղեկություններ**

---

(Թ. Խաչատրյան)

4.1 «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի, «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**5. Տեղեկություններ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ**

---

(Թ. Խաչատրյան)

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման միավոր | «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկվող գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկվող գինը՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | Բենզին, ռեգուլյար | լ | 581,196.00 | 29,304.00 | **610,500.00** | 122,100.00 | **732,600.00** |
| 2 | Բենզին, պրեմիում | լ | 1,311,586.27 | 66,130.40 | **1,377,716.67** | 275,543.33 | **1,653,260.00** |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման միավոր | «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկվող գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկվող գինը՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | Բենզին, ռեգուլյար | լ | 618,860.00 | 19,140.00 | **638,000.00** | 127,600.00 | **765,600.00** |
| 2 | Բենզին, պրեմիում | լ | 1,429,896.67 | 44,220.00 | **1,474,116.67** | 294,823.33 | **1,768,940.00** |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման միավոր | «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկվող գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկվող գինը՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | Բենզին, ռեգուլյար | լ | 600,500.27 | 14,766.40 | **615,266.67** | 123,053.33 | **738,320.00** |
| 2 | Բենզին, պրեմիում | լ | 1,365,036.85 | 33,566.48 | **1,398,603.33** | 279,720.67 | **1,678,324.00** |

5.1 «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի, «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հայտարարություն ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

## 6. Տեղեկությունների հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

---

(Թ. Խաչատրյան)

6.1 Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

## 7. Հանձնաժողովը որոշեց՝

---

(Թ. Խաչատրյան)

7.1 «ՀՀԿՌ-ՇՀԱՊՁԲ-15/1-17» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

7.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետի պահանջների համաձայն.

- ոչ ավտոմատ եղանակով ծանուցել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին, որ հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 14.02.2017թ. ժամը 18:00 ներառյալ, էլեկտոնային ձևով պատվիրատուի **gnumner@cptvrc.am** էլեկտրոնային փոստին ներկայացնի հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

- էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը: Հարցումը անհրաժեշտ է ուղարկել Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկել

Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Թ. Խաչատրյան)

8.1 «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-15/1-17» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ոչ ուշ քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված փաստաղթերի ներկայացման, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարցման մասին եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին Ալեք Մանուկյան 5 հասցեում, 2-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**8. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ **(ԳՊ/ԳԱՊ)** | | Թ. Խաչատրյան |
| Անդամ **(ԳՊ/ԲԱ)** | | Ն. Ղազանչյան |
| Անդամ **(ԳՊ/ԲԱ)** | | Ն. Վարդանովա |
| Անդամ **(ԳՊ/ԳԱ)** | | Շ. Աբելյան |
| Անդամ **(ԳՊ/ԳԱ)** | | Ն. Շամյան |
| Քարտուղար **(ԳՊ/ՄՀմ)** | | Ս. Բադալյան |